ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար սահմանվում են հետևյալ պայմանները՝

1. ՀՀ քաղաքացիություն.
2. բարձրագույն կրթություն.
3. հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

Հիմնական գործառույթները՝

1) իրականացնում է կազմակերպությանն ամրացված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների ֆիզիկական պահպանվածությունն ու անվտանգությունն ապահովող միջոցառումներ, այդ թվում թանգարանային առարկաների կոնսերվացումը և վերականգնումը,
2) իրականացնում է թանգարանային հավաքածուների համալրում՝ նվիրաբերումների, կտակի, գնման եղանակներով,
3) իրականացնում է կազմակերպությանն ամրացված /մշտական կամ ժամանակավոր պահպանության/, ինչպես նաև՝ համալրման նպատակով ձեռքբերված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների հաշվառում,
4) կազմակերպում է թանգարանի մշտական և ժամանակավոր ցուցադրություններ,
5) կազմակերպում է ցուցահանդեսներ կազմակերպությանն ամրացված, նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող թանգարանային առարկաներով և թանգարանային հավաքածուներով,
6) իրականացնում է գիտալուսավորչական աշխատանք, կազմակերպում դասախոսություններ, համաժողովներ,
7) պատրաստում և հրատարակում է ուղեցույցներ, կատալոգներ, ինչպես նաև կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկատվական և գովազդային նյութեր,
8) համագործակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա թանգարանների հետ՝ թանգարանային գործի տեսական ու գիտագործնական խնդիրների վերաբերյալ համատեղ ծրագրերի մշակման և իրականացման նպատակով,
9) Իրականացնում է սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ (Կանոնադրությունը կցվում է)

Մրցույթին մասնակցել ցանկացողները թղթային տարբերակով պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) լրացված դիմում՝ հղումը՝ https://docs.google.com/document/d/1CjgcoZy_HuS3-8M_o_CXvd3D-FGvhANd/edit?usp=sharing&ouid=102277611882408870102&rtpof=true&sd=true

2) ինքնակենսագրություն՝ հղումը՝ https://docs.google.com/document/d/1svm7imCKiWzM77swNahr2hRuhyqgcRlI/edit?usp=sharing&ouid=102277611882408870102&rtpof=true&sd=true

3) անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը)

4) 2 գունավոր լուսանկար՝ 3x4 չափսի
5) բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները)
6) օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները) առկայության դեպքում,
7) գիտական աստիճանի վկայականը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները) առկայության դեպքում
8) աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ), որը կբավարարի սահմանված պահանջներին և հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալները ներառող տեղեկանք նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է առձեռն:

Փաստաթղթերն ընդունվում են ք.Վանաձոր, 2001, Հայքի հրապարակ, (ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի վարչական շենք) հասցեով՝ ամեն օր, բացի շաբաթ, կիրակի ու տոնական օրերից, ժամը 10^{00}-ից մինչև 12^{30}-ը և 14^{30}-ից մինչև 15^{30}-ը: Դիմումներն ընդունվում են 2024 թվականի օգոստոսի 7-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 27-ը ներառյալ, տեղեկատու հեռ.՝ /0322-2-10-24/, էլեկտրոնային փոստի հասցեն՝ lori.qartughar@mta.gov.am

«Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման և բարեփոխման մշակված հայեցակարգը հարցազրույցի մասնակիցը թղթային տարբերակով պետք է հանձնաժողովին ներկայացնի 2024 թվականի հոկտեմբերի 24-ին:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2024 թվականի հոկտեմբերի

22-ին՝ ժամը 10^{00}-ին ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի վարչական շենքում (հասցեն՝ ք. Վանաձոր, Հայքի հրապարակ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2024 թվականի հոկտեմբերի 25-ին՝ ժամը 10^{00}-ին, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի վարչական շենքում (հասցեն՝ ք. Վանաձոր, Հայքի հրապարակ):

Հիմնական աշխատավարձը՝ 195270 (հարյուր ինսուն հինգ հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

Մրցույթի թեստավորման փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի շրջանակը՝

ՀՀ Սահմանադրություն

https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

(Հոդվածներ՝ 1-3,5-8,10,13-18,20-21,25,27,31-32,35-38,40-41,44,46-47,49,51,57-58,64,66,70,72-73,103,180,182-184),

ՀՀ աշխատանքային օրենսգիրք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194077

(Հոդվածներ՝ 3,5,15,16,23,30,45,73-74,85-86,99-101,103,109,112,123-124,132,139-142,146,152-153,155,158-159,163-164,171,174,219-225,229,244)

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193927

(Հոդվածներ՝ 3-7, 10-12, 15-18, 23-25),

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=191179

(Հոդվածներ՝ 1-4,6,8,17-18,20-22,24,26),

«Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=121003

(Հոդվածներ՝ 3, 5, 7-10,12-13,15),

«Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենք,

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=178242

(Հոդվածներ՝ 5, 7, 8, 10, 12,13,16),

«Թանգարանների մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191085

(Հոդվածներ՝ 7,12-13,17,28)

ՀՀ կառավարության որոշումը պետական և համայնքային թանգարաններում գտնվող՝ թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված թանգարանային առարկաների հաշվառման ու պահպանության կարգը հաստատելու և 2007 թվականի ապրիլի 5-ի N 484-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 31 մայիսի 2012 թվականի 705-Ն որոշում հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76436

«Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ հղումը
https://drive.google.com/file/d/1zURs6t2YB_NnBwmIj2C3nZMHCsnifbXl/view?usp=sharing
Թեստային հարցերի նմուշը՝
https://drive.google.com/file/d/1UP2oJbIKa6nXcz7LqlNH0SR-oLxOMRYp/view?usp=sharing

Հարցազույցի փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի և հմտությունների շրջանակն է՝
ՀՀ աշխատանքային օրենսգիրք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194077

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193927

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=191179

«Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=121003

«Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենք,

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=178242

«Թանգարանների մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191085

ՀՀ կառավարության որոշումը պետական և համայնքային թանգարաններում գտնվող՝ թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված թանգարանային առարկաների հաշվառման ու պահպանության կարգը հաստատելու և 2007 թվականի ապրիլի 5-ի N 484-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 31 մայիսի 2012 թվականի 705-Ն որոշում հղումը՝

https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76436

«Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝
https://drive.google.com/file/d/1zURs6t2YB_NnBwmIj2C3nZMHCsnifbXl/view?usp=sharing

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

Աշխատակազմի /անձնակազմի/ կառավարում

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf

Բարեվարքություն

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf

Խնդրի լուծում

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

Որոշումների կայացում

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf

Հայեցակարգը պետք է՝
1) լինի առավելագույնը 20 էջ.
2) պարունակի պետական կազմակերպության ոլորտի առկա խնդիրների համակարգային վերլուծությունը և գնահատումը.
3) ներառի պետական կազմակերպության ընագավառի զարգացման և բարեփոխման առաջարկները:

Անձնական որակների՝ աշխատանքային էթիկայի և բարեվարքության կանոնների իմացություն:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին (հեռ.0322-2-10-24):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N 539-Ն որոշման հավելվածի 17-րդ կետը՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը հասարակական կազմակերպություններին հրավիրում է դիմելու՝ «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի մրցութային հանձնաժողովում ընդգրկվելու նպատակով:

Դիմել կարող են այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները և խնդիրներն առնչություն ունեն պետական կազմակերպության գործունեության ոլորտի հետ և դիմելու ամսվան նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն են ծավալել տվյալ ոլորտում: Սույն պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունների դիմումների հիման վրա համակարգչային ծրագրով՝ պատահական ընտրության սկզբունքով ընտրվելու է մեկ հասարակական կազմակերպություն:

Բոլոր հետաքրքրված հասարակական կազմակերպությունները ստորագրված դիմումները կարող են ներկայացնել՝ ուղարկելով ՝ **lori.qartughar@mta.gov.am**_էլեկտրոնային հասցեին: Հասարակական կազմակերպությունների կողմից դիմումների ընդունման վերջնաժամկետ է հանդիսանում մրցույթին մասնակցության համար փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը:

Դիմումի մեջ անհրաժեշտ է նշել՝

1. Կազմակերպության անվանումը
2. Կազմակերպության գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն
3. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն
4. Կազմակերպության կանոնադրությունը: